ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հունիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

81
(3290)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը հերթական անգամ դատարանում հաղթանակ տարավ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի դեմ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժել է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի վերաքննիչ բողոքը եւ անփոփոխ է թողել ՀՀ վարչական դատարանի 2025 թվականի հունիսի 16-ի վճիռը, որով ապօրինի էր ճանաչվել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնարիկ Մանուկյանի՝ Ազգային Ժողովի հավատարմագրումը դադարեցնելու մասին որոշումը:

Հիշեցնենք, որ 2023 թվականի դեկտեմբերի 15-ին ԱԺ աշխատակազմը, որի ղեկավարն է Դավիթ Առաքելյանը, դադարեցրել էր «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հավատարմագրումը՝ փաստացի խոչընդոտելով խորհրդարանական գործունեության լուսաբանումը: Այդ որոշումը մեր լրագրողը վիճարկել էր դատարանում՝ պահանջելով այն ճանաչել ոչ իրավաչափ:

Նախ վարչական դատարանը, իսկ այժմ արդեն նաեւ վերաքննիչ վարչական դատարանը հաստատել են, որ Ազգային Ժողովի աշխատակազմի որոշումը չի համապատասխանում օրենքի պահանջներին: Այսպիսով, երկրորդ դատական ատյանն էլ արձանագրեց, որ լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու որոշումն ապօրինի է եղել:

Փաստացի, դատարանները հերթով մերժում են ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանի դիրքորոշումը՝ արձանագրելով լրագրողի մասնագիտական գործունեության նկատմամբ կիրառված սահմանափակման անհիմն լինելը: Հատկանշական է, որ խոսքը վերաբերում է մի որոշման, որը կայացվել էր այն ժամանակ, երբ Ազգային Ժողովի ղեկավարությունը՝ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ, կոշտ պայքար էր սկսել իրենց համար անհարմար հարցեր բարձրացնող եւ խորհրդարանի աշխատանքը քննադատաբար լուսաբանող լրագրողների դեմ:

Վերաքննիչ դատարանի որոշմամբ՝ ԱԺ աշխատակազմի բողոքը մերժվել է ամբողջությամբ, իսկ առաջին ատյանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սա ոչ միայն «Ժողովուրդ» օրաթերթի, այլեւ մամուլի ազատության հերթական դատական փոքրիկ, արդեն շատ ուշացած հաղթանակն է:

«Ժողովուրդ» օրաթերթը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հրապարակած նվերների հաշվառման ձեւաթղթերից պարզեց, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, 2026 թվականի հունիս ամսվա թարմացված տվյալների համաձայն, ստացել է առնվազն հինգ արարողակարգային եւ պաշտոնական նվեր, որոնց թվում կան թանկարժեք աքսեսուարներ, հնատիպ գրքեր, շքանշան եւ դեկորատիվ իրեր: Ամենաթանկ նվերը վարչապետին հանձնել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը: Խոսքը Ֆրանսիայի Հանրապետության Պատվո լեգեոնի «Մեծ խաչ» շքանշանի մասին է, որի արժեքը գնահատվել է 1 մլն 265 հազար 115 դրամ: Նվերը Փաշինյանին հանձնվել է մայիսին՝ Ֆրանսիայի նախագահի պատվին նախագահական նստավայրում կազմակերպված պետական ընթրիքի շրջանակում: Մեկ այլ ուշագրավ նվեր եւս ստացվել է Ֆրանսիայի նախագահի կողմից: Վարչապետին փոխանցվել է Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» աշխատությունը, որը հրատարակվել է դեռեւս 1818 թվականին Վենետիկում: Հնատիպ գրքի արժեքը գնահատվել է 308 հազար 635 դրամ: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը Հայաստան-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովի շրջանակում Նիկոլ Փաշինյանին մայիսի 5-ին նվիրել է «RECIFE» ապրանքանիշի կաշվե պայուսակ, որի արժեքը կազմել է 161 հազար 918 դրամ:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Պատգամավորի երդման առաջարկվող նոր տեքստը շուտով կդրվի քվեարկության: «Հանուն Հայաստանի Հանրապետության հարատեւության, անկախության, ինքնիշխանության եւ հզորացման՝ երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի ներկայացուցչի պարտականություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդմանը եւ շահերի պաշտպանությանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության եւ բարեկեցության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար: Փառք նահատակներին եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը»: Մինչ այժմ երդման հետեւյալ տեքստն էին արտասանում. «Հանուն համազգային նպատակների իրականացման եւ հայրենիքի հզորացման ու բարգավաճման՝ երդվում եմ՝ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտավորություններս, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները, նպաստել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության եւ շահերի պահպանմանը, անել ամեն ինչ՝ քաղաքացիական համերաշխության, ազգային ու համամարդկային արժեքների պահպանման համար»: Նոր տեքստը հրապարակել է Ալեն Սիմոնյանը:



Սահմանադրական դատարանի դատավորները ժամանակ չունեն եւ ներքին խոսակցության ժամանակ նշել են, որ պետք է հասցնեն, քիչ ժամանակ կա, եւ հուլիսի 4-ին պետք է Սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքների վիճարկման գործով որոշումը հրապարակեն: Հայտնի էր, որ Սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքների վիճարկման գործով երկու դատավոր չի մասնակցի քննությանը: Խոսքն արդարադատության նախկին նախարար, «Հանրապետություն» կուսակցության նախկին անդամ Արտակ Զեյնալյանի եւ բոլորովին վերջերս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորի մանդատը վայր դրած Վլադիմիր Վարդանյանի մասին է: Ու մինչ Սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքների վիճարկման գործով 7 դատավորները օր ու գիշեր կարդում են ներկայացված դիմումները, ընտրությունների արդյունքների վիճարկման գործընթացից դուրս մնացած 2 դատավորները՝ Արտակ Զեյնալյանը եւ Վլադիմիր Վարդանյանը, ՍԴ-ում այլ դիմումների ուսումնասիրման գործընթացով են զբաղված: Խորհրդարանական ընտրությունների արդյունքները վիճարկող յոթ քաղաքական ուժերի դիմումներով գործերը միավորել են եւ քննվելու են դատարանի նույն նիստում՝ հունիսի 26-ին: Գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի փոխնախագահ Էդգար Շաթիրյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՁԵՎԱՎՈՐՎԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ»

Armlur.am-ը զրուցել է կրոնագետ, փիլիսոփա Վարդան Խաչատրյանի հետ:

- Պարոն Խաչատրյան, ինչպիսի՞ն պետք է լինեն պետության եւ եկեղեցու փոխհարաբերությունները:

- Պետության պատասխանատվությունն է հնարավորինս ապահովել եկեղեցու գործունեության ազատ ընթացքը եւ նրա ազդեցության տարածումը աշխարհում: Հայ առաքելական եկեղեցին միայն Հայաստանի շրջանակներում գործող կառույց չէ, այլ համաշխարհային նշանակության հաստատություն է, որը մեծ դեր ունի հայության եւ հատկապես սփյուռքի կյանքում: Որքան ուժեղ է եկեղեցու ազդեցությունը, այնքան ամուր են հայ ժողովուրդն ու սփյուռքը, ինչը նպաստում է նաեւ հայրենիքի հզորացմանը:

- Ինչո՞ւ է եկեղեցին կարեւոր ազգային անվտանգության տեսանկյունից:

-Հայաստանի ազգային անվտանգության կարեւորագույն առանցքը ազգային ինքնությունն է: Մեր ազգային ինքնության պահպանման գործում շուրջ 1700 տարի առանցքային դեր է կատարել Հայ առաքելական եկեղեցին: Այն օգնել է պահպանել լեզուն, մշակույթը, հավատքը եւ ազգային ինքնագիտակցությունը՝ նույնիսկ պետականության բացակայության պայմաններում:

- Ինչպե՞ս կարելի է ձեւավորել առողջ հարաբերություններ պետության եւ եկեղեցու միջեւ:

- Պետք է ձեւավորվի փոխադարձ վստահության մթնոլորտ: Դրա համար անհրաժեշտ է կազմակերպել հասարակական քննարկումներ եւ կլոր սեղաններ՝ բարձրակարգ մտավորականների մասնակցությամբ: Միայն ռազմավարական մտածողության եւ երկարաժամկետ ծրագրերի առկայության դեպքում հնարավոր կլինի կառուցել արդյունավետ համագործակցություն: Առանց ռազմավարության նույնիսկ առանձին հաջողությունները կարող են ժամանակավոր լինել:

- Ո՞րն է եկեղեցու հիմնական դերը պատերազմի ժամանակ:

- Պատերազմի ժամանակ եկեղեցու գլխավոր առաքելությունը ժողովրդի դիմադրողականության բարձրացումն է: Երբ մարդիկ կորցնում են հարազատներին, ապրում են ծանր հոգեբանական վիճակ, եկեղեցին է, որ կարող է հոգեւոր սփոփանք եւ ուժ տալ: Հոգեւոր աջակցությունը հաճախ անփոխարինելի է եւ չի կարող փոխարինվել միայն նյութական օգնությամբ:

- Կարո՞ղ է եկեղեցին երբեւէ վտանգ ներկայացնել պետության համար:

- Իմ համոզմամբ՝ ոչ: Կարելի է քննադատել եկեղեցու առանձին երեւույթներ կամ գործելակերպ, սակայն չի կարելի հարվածի տակ դնել եկեղեցու ինստիտուտը որպես ամբողջություն: Հայ առաքելական եկեղեցին հայ ժողովրդի հոգեւոր ինքնության կարեւորագույն կրողներից է, եւ նրա նկատմամբ անզգույշ վերաբերմունքը կարող է վնասել ազգային հիմքերին:

- Պատերազմի ժամանակ միավորող ուժը պետությո՞ւնն է, թե՞ եկեղեցին:

- Երկուսն էլ կարեւոր դեր ունեն, սակայն եկեղեցին պատմության ընթացքում բազմիցս դարձել է համախմբող ուժ: Հայ ժողովրդի պատմության մեջ բազմաթիվ օրինակներ կան, երբ հոգեւորականները ոչ միայն բարոյական աջակցություն են ցուցաբերել, այլեւ անմիջական մասնակցություն ունեցել ազգային պայքարին:

- Կարո՞ղ եք պատմական օրինակ բերել եկեղեցու նման դերակատարման մասին:

-Այո՛: Սարդարապատի ճակատամարտի ժամանակ Գարեգին Հովսեփյան արքեպիսկոպոսը զորքի հետ էր եւ ոգեշնչում էր մարտիկներին: Նա խորհրդանշում էր այն գաղափարը, որ եկեղեցին եւ ժողովուրդը մեկ միասնական օրգանիզմ են, եւ եկեղեցու ճակատագիրը սերտորեն կապված է ողջ հայության ճակատագրի հետ:

- Ի՞նչ հիմնական ուղերձ կցանկանայիք փոխանցել եկեղեցի-պետություն հարաբերությունների վերաբերյալ:

- Պետությունն ու եկեղեցին պետք է գործեն ոչ թե հակադրության, այլ համագործակցության եւ փոխադարձ վստահության պայմաններում: Հայ առաքելական եկեղեցին դարեր շարունակ եղել է ազգային ինքնության պահպանման հենասյուներից մեկը, ուստի նրա դերն ու նշանակությունը պետք է գնահատվեն ռազմավարական տեսանկյունից՝ ի շահ պետության, հասարակության եւ ողջ հայության:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻՆ ԾԵԾԵՑԻՆ

ArmLur.am-ը պարզեց, որ երեկ Երեւանի քաղաքապետարանում ծեծի ենթարկվածը Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գրիգոր Իսկանդարյանն է: Նշենք, որ մոտ մեկ տարի առաջ Գրիգոր Իսկանդարյանը հայց էր ներկայացրել Տիգրան Ավինյանի հոր դեմ: Տիգրան Ավինյանի հոր նկատմամբ ներկայացված գործը վերաբերում էր այն արտահայտությանը, երբ նա Opel-ի վարորդներին հրապարակային կերպով անվանել էր «համբալ»: Գրիգոր Իսկանդարյանը ֆեյսբուքյան իր էջում հայտնել էր, որ դատարանը բավարարել է իրենց հայցը մասնակի՝ 250 հազար դրամի չափով, մինչդեռ պահանջը եղել էր 500 հազար դրամ: Նրա խոսքով՝ գումարը ուղղվելու է բարեգործությանը, եւ իրենք սպասում են՝ կողմը կդիմի վերաքննիչ, թե ոչ:

Հավելենք, որ երեկվա ծեծկռտուքի ակտիվ ծեծողներից էր Երեւանի քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի պաշտոնակատար Ավետիք Բաբայանը:

Ս. Գ.

Ո՞Վ Է ԱՊՏԱԿԵԼ

ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, որ Երեւանի քաղաքապետարանում ծեծկռտուքի ընթացքում միջադեպ է տեղի ունեցել նաեւ կին ավագանու անդամների միջեւ: Տեսագրության համաձայն՝ Անի Խաչատրյանը ջուր է լցնում ավագանու անդամ Աննա Ավետիսյանի վրա, ինչին վերջինս, ըստ կադրերի, արձագանքում է ապտակելով:

Հիշեցնենք, որ Անի Խաչատրյանը 2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքներով ընտրվել է ավագանու անդամ՝ «Հանրապետություն» կուսակցության համամասնական ցուցակով:

Աննա Ավետիսյանը Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ է: Հավելենք, որ Աննա Ավետիսյանը երգչուհի է եւ ունի երաժշտական բարձրագույն կրթություն՝ ավարտելով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, ինչպես նաեւ երկար տարիներ զբաղվել է երգչախմբային եւ մանկավարժական գործունեությամբ:

Ս. Գ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ Է ԿԱՅԱՑԵԼ

2026 թվականի հունիսի 22-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Սիմոնյանի գլխավորությամբ տեղի ունեցավ Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրը անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը: Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա. Սիմոնյանը բացման խոսքում ներկայացրել է նախորդ նիստի ընթացքում արձանագրված հիմնական խնդիրների եւ դրանց լուծման ուղղությամբ իրականացված հանձնարարականների կատարման ընթացքը: Անդրադարձ է կատարվել 2026 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած «Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին՝ ընդգծելով դրանց կարեւորությունը անհայտ կորած անձանց հարցերի համակարգային կարգավորման տեսանկյունից, ինչպես նաեւ օրենքի կիրարկմանն ուղղված կազմակերպչական միջոցառումներին: Նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել տարբեր պետական մարմինների եւ շահագրգիռ կառույցների միջեւ աշխատանքների համակարգման հետ կապված հարցերին: Քննարկումների արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ, սահմանվել են հետագա աշխատանքների կազմակերպման հիմնական ուղղությունները:

ՑՈՒՑԱՆԻՇԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է

ՀԷՑ-ի բաշխման ցանցում ընթացիկ տարվա մարտ, ապրիլ եւ մայիս ամիսներին վթարային հոսանքազրկումների միջին տեւողությունը կազմում է 57,7 րոպե/բաժանորդ, իսկ 2025թ. նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը եղել է 78,9 րոպե/բաժանորդ: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀԷՑ ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը: «Ըստ այդմ. ժամանակավոր կառավարման վերջին երեք ամիսներին վթարային անջատումների միջին վիճակագրական ցուցանիշը բարելավվել է շուրջ 36,7%-ով: Անխոս, դա ՀԷՑ-ի հազարավոր աշխատակիցների համառ աշխատանքի, անխոնջ նվիրումի եւ բարձր հանձնառության արդյունք է, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր աշխատակիցներին, եւ առաջին հերթին, էներգետիկ-տեխնիկական եւ ինժեներական ստորաբաժանումների մասնագետներին»,- գրել է նա:

«ՇԱՆԳՐԻ ԼԱ»-Ի ԼԻՑԵՆԶԻԱՆ՝ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանին պատկանող «Շանգրի Լա» խաղատունը շահագործող «Օնիրա քլաբ» ՍՊԸ-ի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել: Այս մասին տեղեկացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը: ««Օնիրա քլաբ» ՍՊԸ խաղատան կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել»,-գրել է Պապոյանը՝ կից հրապարակելով համապատասխան փաստաթուղթը: Ըստ հրապարակված փաստաթղթի՝ հիմք է ընդունվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի հունիսի 8-ի միջնորդությունը եւ հունիսի 3-ին կազմված ստուգման ակտը: «Ընկերության կողմից 2026 թվականի մարտ ամսվա համար վերահսկող մարմին ներկայացված ֆինանսական հոսքերի մասին հաշվետվության մեջ ներառված տվյալների եւ ստուգման շրջանակում ձեռք բերված խաղային ապարատների հաշվիչների ցուցմունքների միջեւ առկա անհամապատասխանությունները որակվել են որպես խեղաթյուրված եւ կեղծ տվյալներ»,- ասված է հրամանի հիմնավորման մեջ: Այս հրամանը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից՝ հունիսի 23-ից, երկամսյա ժամկետում:

ԿՄՆԱ ՀԱՊԿ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

Հայաստանը կմնա Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) լիիրավ անդամ՝ պահպանելով իր բոլոր իրավունքներն ու պարտավորությունները: Այս մասին Ռիա Նովոստիին տված հարցազրույցում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Հայաստանն ավելի քան երկու տարի է՝ զերծ է մնում ՀԱՊԿ ձեւաչափով միջոցառումներին մասնակցելուց, ընդ որում՝ մնալով դրա լիիրավ անդամը, որն իր վրա է պահում բոլոր համապատասխան իրավունքներն ու պարտավորությունները», - ասել է Զախարովան:

Հայաստանի խորհրդարանը մարտին օրենք է ընդունել Եվրամիությանը երկրի անդամակցության գործընթացը սկսելու մասին, ապրիլին փաստաթուղթը հաստատել է հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը: Իր հերթին, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ միաժամանակ եւ ԵՄ-ի, եւ ԵԱՏՄ-ի մաքսային միությունում գտնվելը հնարավոր չէ: ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում Հայաստանը կարող է կորցնել առեւտրային արտոնությունները, որոնք ստանում էր Միությանը անդամակցության շնորհիվ, մասնավորապես Միության երկրների համար 5% միասնական ցածր սակագնային դրույքաչափը եւ նույնիսկ որոշ դեպքերում ապրանքների անմաքս ներմուծման իրավունքը:

ՓԱՌԱՏՈՆ

ՀՀ ՔԱՐՏԵԶԸ՝ «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ»

Ադրբեջանի Գյոյգյոլի շրջանում հունիսի 22-ին անցկացվել է «Արեւմտյան Ադրբեջանի ժառանգությունը. վերադարձ պատմական արմատներին» խորագրով փառատոնը, որի ընթացքում հերթական անգամ հնչեցվել են Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ու մշակութային ժառանգությանը վերաբերող վիճահարույց հայտարարություններ:

Փառատոնի շրջանակում կազմակերպված ցուցահանդեսներում եւ տաղավարներում ներկայացվել են այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» տարբեր շրջանները: Տարածված լուսանկարներից եւ տեսանյութերից երեւում է, որ ցուցադրություններում օգտագործվել է Հայաստանի Հանրապետության քարտեզը, որը ներկայացվել է որպես «Արեւմտյան Ադրբեջան»:

Ավելին, «Արեւմտյան Ադրբեջանի» սոցիալական ցանցերի էջերով տարածված տեսանյութերում որպես երաժշտական ուղեկցություն օգտագործվել է հայկական ժողովրդական «Քոչարի» պարը՝ առանց որեւէ փոփոխության: Հայկական մշակույթի կարեւոր բաղադրիչներից մեկը ներկայացվել է ադրբեջանական միջոցառման շրջանակում՝ առանց դրա հայկական ծագման մասին որեւէ հիշատակման:

Տեսանյութերում երեւում է նաեւ, որ փառատոնի մասնակիցները ցուցադրում են Հայաստանի տարբեր վայրերում արված հին լուսանկարներ՝ փորձելով ապացուցել, թե իրենց ընտանիքները նախկինում բնակվել են այդ տարածքներում: Ցուցադրված լուսանկարների շարքում եղել են Երեւանի Հանրապետության հրապարակում եւ Վայոց ձորի Նորավանք վանական համալիրի տարածքում արված կադրեր, որոնք ներկայացվել են որպես «Արեւմտյան Ադրբեջանի» հետ կապված պատմական հիշողության մաս:

Փառատոնի ընթացքում ելույթ ունեցած Արեւմտյան Ադրբեջանի համայնքի ղեկավարներն ու Ադրբեջանի պաշտոնյաները կրկին խոսել են այսպես կոչված «վերադարձի իրավունքի» մասին՝ հայտարարելով, որ նման միջոցառումները ապագայում պետք է անցկացվեն նաեւ - Զանգեզուրում եւ այլ վայրերում, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Մինչ Ադրբեջանում պետական աջակցությամբ շարունակվում են Հայաստանի պատմամշակութային ժառանգության, ժողովրդական մշակույթի եւ նույնիսկ աշխարհագրական տարածքների նկատմամբ հավակնություններ պարունակող միջոցառումները, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը որեւէ կերպ չի արձագանքում տեղի ունեցող գործընթացներին:

Հատկանշական է, որ վերջին տարիներին հայկական մշակութային արժեքների յուրացման կամ դրանց ադրբեջանական ներկայացման վերաբերյալ բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, սակայն պետական մակարդակով արձագանքները հաճախ սահմանափակ են եղել կամ ընդհանրապես չեն հնչել: Իսկ այս դեպքում ադրբեջանական պետական կառույցների մասնակցությամբ անցկացված փառատոնում ոչ միայն օգտագործվել են հայկական մշակութային տարրեր, այլեւ Հայաստանի Հանրապետության տարածքներն ու պատմամշակութային հուշարձանները ներկայացվել են որպես «Արեւմտյան Ադրբեջանի» մաս՝ պահանջելով ապահովել նրանց բնակեցում ՀՀ տարածքում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱՎԵՐ ԵՆ ԿՈՒՏԱԿՎԵԼ

Հորմուզի նեղուցի արեւելյան հատվածում ավելի քան 400 խոշոր նավ է կուտակվել: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին գրում է Financial Times-ը՝հղում անելով Եվրոպական տիեզերական գործակալության արբանյակային տվյալների սեփական վերլուծությանը: Պարբերականի տվյալներով՝ Sentinel-1 ռադարային արբանյակի վերջին անցման ժամանակ Սոհար եւ Ֆուջեյրա նավահանգիստների մոտ արձանագրվել է 441 խոշոր նավ: Դրանք գտնվում են Հորմուզի նեղուցի արեւելյան հատվածում՝ սպասելով անցման հնարավորության հստակեցմանը:

Financial Times-ի փոխանցմամբ՝ նախորդ շաբաթ որոշ նավատերեր արդեն փորձել էին տանկերները անցկացնել նեղուցով՝ օգտվելով Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունից: Չնայած հիմնական նավագնացային ուղիների բացման եւ ականազերծման վերաբերյալ համաձայնությանը՝ Իրանը շաբաթ օրը կրկին հայտարարել էր նեղուցը փակելու մասին՝ Լիբանանի ուղղությամբ Իսրայելի հարվածներից հետո: Այս ընթացքում Իրանի եւ ԱՄՆ-ի պատվիրակությունները Շվեյցարիայում ինտենսիվ բանակցություններ են անցկացրել, որոնք շարունակվել են կիրակիից մինչեւ երկուշաբթի վաղ առավոտ: ԱՄՆ ներկայացուցիչներից մեկը հայտարարել է, որ քննարկումների ընթացքում կողմերը, մասնավորապես, զբաղվել են Հորմուզի նեղուցի վերաբերյալ Իրանից եկող «խառը ազդակների» հստակեցմամբ եւ հակամարտության ռիսկերի նվազեցման մեխանիզմների ձեւավորմամբ՝ նավերի համար ուղին մշտապես բաց պահելու նպատակով:

ԶՐՈՒՑԵԼ ԵՆ

Լիբանանի վարչապետ Նավաֆ Սալամը հեռախոսազրույց է ունեցել Սիրիայի արտգործնախարար Ասադ աշ-Շայբանիի հետ՝ տարածաշրջանում արագ փոփոխվող իրավիճակի ֆոնին: Ինչպես նշվում է Լիբանանի վարչապետի գրասենյակի հաղորդագրության մեջ, զրույցը տեղի է ունեցել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարություններից հետո, որը ենթադրել էր, թե Սիրիան կարող է միջամտել «Հըզբոլլահի» հետ դիմակայությանը, եթե Իսրայելը չհասնի իր նպատակներին: Սիրիայի նախագահ Ահմեդ աշ-Շարաան ավելի վաղ իր հարցազրույցում մերժել էր ռազմական միջամտության հնարավորությունը՝ հայտարարելով, որ Դամասկոսն ապավինում է բացառապես դիվանագիտական, քաղաքական եւ տնտեսական մեթոդներին՝ տարածաշրջանային կայունությունն ապահովելու համար: Իրավիճակի հետնապատկերին Սալամը Սիրիայի առաջնորդի դիրքորոշումն անվանել է «եղբայրական ու անկեղծ» եւ աջակցություն հայտնել դրան:

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ

Հայկական ծիրանի առաջին խորհրդանշական խմբաքանակը ժամանել է Եվրոպական միություն: Այս մասին X-ի իր էջում գրել է ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը: «Շնորհակալություն Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին նվերի եւ շատ լավ քննարկման համար: Մենք հանդիպեցինք վաղը կայանալիք «Կապակցվածության օրակարգ» (Connectivity Agenda) հարթակի մեկնարկից առաջ, որտեղ մենք առաջ ենք տանելու Հայաստանը իր հարեւանների եւ Եվրոպայի հետ ավելի լավ կապելու մեր աշխատանքը: Սա հայ արտադրողներին կօգնի դիվերսիֆիկացնել իրենց արտահանումը եւ իրենց բարձրորակ արտադրանքից ավելին հասցնել նոր շուկաներ»,- գրել է Կոսը:

ՔՐԳՈՐԾ

Ի՞ՆՉ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ԵՆ ՄՏԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՏՈՒՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իրավապահները մտել են Իշխան Սաղաթելյանի տուն ՀՀ ֆինչական կոմիտեում հարուցված քրեական վարույթի շրջանակում:

Չի բացառվում, որ գործողությունները կապված լինեն Բագրատ Սրբազանի դեմ հարուցված քրեական վարույթի հետ, որի շրջանակում Իշխան Սաղաթելյանը դեռեւս անցած տարի հրավիրվել էր նախաքննական մարմին՝ հարցաքննության: Դեռեւս անցած տարի գրել էինք, որ ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանի շուրջ օղակը սեղմվում է: ՀՀ քննչական կոմիտեի սահմանադրական կարգի հիմունքների եւ պետության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում լայնածավալ քննություն է սկսվել: Քննչական կոմիտե են հրավիրում տարբեր անձանց, եւ հարցաքննությունների ընթացքում հիմնականում Իշխան Սաղաթելյանի գործողությունների վերաբերյալ հարցադրումներ են արվում՝ «Սրբազան պայքարի» մասով:

Նշենք, որ «Բագրատ Սրբազանի եւ 17 արդարների» գործից կա անջատված մաս, եւ այդ քրեական վարույթը Քննչական կոմիտեում շարունակվում է: Նշենք նաեւ, որ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանը ՀՀ քննչական կոմիտեում հարցաքննվել էր «Սրբազան պայքարի» գործի շրջանակում: Վերջինս նշել էր, որ հրաժարվել է որեւէ ցուցմունք կամ բացատրություն տալ. «Հայտարարել եմ՝ դա քաղաքական գործ է, իրավական որեւէ գործընթաց տեղի չի ունենում, դա ընդամենը քաղաքական պատվերի շրջանակում իրականացվող հետապնդում է, եւ ես հրաժարվում եմ որեւէ բացատրություն տալուց»:

Ինչ է սպասվում Իշխան Սաղաթելյանին: Այս իրավիճակում առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ եթե պատգամավորին կանչել են հարցաքննության որեւէ քրեական վարույթով, եւ այն էլ՝ կասկածանքի շուրջ, հարցաքննության ընթացքում նրան ուղղել են իր դեմ հարցեր, իսկ վերջինս, օգտվելով իր դատավարական իրավունքից, հրաժարվել է ցուցմունք տալ, ապա դա ենթադրում է, որ նրա նկատմամբ փաստացի քրեական հետապնդում սկսելու գործընթաց է տեղի ունենում: Սակայն ստացվում է, որ նախաքննական մարմինը, ըստ էության, այս իրավիճակում սխալ մոտեցում է որդեգրել եւ, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը չիրականացնելով, նրան կասկածանքի վերաբերյալ հրավիրել եւ հարցաքննել է՝ փաստացի տալով մեղադրյալի կարգավիճակ եւ օժտելով մեղադրյալի իրավունքներով ու պարտականություններով: Սա բացահայտ ապօրինություն է եւ հետագա հնարավոր պաշտոնական մեղադրանքի պարագայում քննչական մարմնի գործողությունները իրավական տեսանկյունից դարձնում է բացահայտ խոցելի:

Խուզարկությունն այս պահին ավարտված է, իսկ Քննչական կոմիտեն լռում է, թե որ վարույթի մասին է խոսքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՈՒՆՆԵՐ

ՀԵՐԹՈՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Իրավապահները մեկը մյուսի հետեւից կալանավորման են տանում «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանի հարազատներին:

Հայտնել էինք, որ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կալանքի են տարել Դավիթ Ղազինյանի սանիկին՝ Արման Սարգսյանին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ տնային կալանքի են տարել նաեւ սանիկի քրոջը՝ Լիլյա Սարգսյանին:

Նշենք, որ հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեն դիմել էր ՀՀ գլխավոր դատախազություն՝ պատգամավորի թեկնածու գրանցված Դավիթ Ղազինյանին անձեռնմխելիությունից զրկելու նպատակով ԿԸՀ միջնորդություն ներկայացնելու համար: Դատախազությունը ներկայացրել էր երկու դիմում՝ հանձնաժողովին խնդրելով համաձայնություն տալ քրեական հետապնդում հարուցելուն եւ թեկնածուին ազատությունից զրկելուն: Հունիսի 17-ին ԿԸՀ-ն երկու միջնորդություններն էլ բավարարել էր, եւ ժամեր անց Դավիթ Ղազինյանը ձերբակալվել էր: Արդեն հաջորդ օրը՝ առավոտյան, որոշում էր կայացվել նրան երկու ամսով կալանավորելու մասին:

Հավելենք, որ հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեն հաղորդագրություն եւ ձայնագրություն էր տարածել, որտեղ նշվում էր Ղազինյանի կողմից 1,4 մլն դրամ ենթադրյալ ընտրակաշառք տալու մասին:

«ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երեւանի Արաբկիր վարչական շրջանի գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, ինչպես նաեւ նույն կուսակցության պատգամավորի թեկնածու գրանցված Դավիթ Ղազինյանը, կուսակցության համակիրների եւ նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել, ինչպես նաեւ տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ եւ վարութային այլ գործողություններ»,-նշվում էր հաղորդագրությունում:

Դավիթ Ղազինյանն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: «Չկա այդպիսի գումար, ես չգիտեմ՝ ով ում է տվել, ինչ է արել, չկա այդպիսի գումար: Նախ, եթե անգամ տեսականորեն դա տրված լիներ, ի՞նչ է նշանակում՝ ես մտել եմ տարածք կամ տվել եմ գումար ինչ-որ մեկին, ասել եմ՝ սա ընտրակաշառքի գումար է: Աբսուրդ է էլի»,-ասել էր նա:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂ Է ՎԻՐԱՎՈՐՎԵԼ

Քաղաքացին ArmLur.am-ին ահազանգել է այն մասին, որ Փամբակի ուսումնական զորամասում ուսումնական վարժանքների ժամանակ զինծառայող է վնասվածք ստացել: Մեզ հետ զրույցում նա տեղեկացրեց, որ զինծառայողը Սովետաշենի զորամասից է: Քաղաքացու պնդմամբ՝ նման դեպքերն այս զորամասում տեղի են ունենում ոչ ճիշտ հրամկազմի հետեւանքով: Նրա խոսքով՝ զորամասում թույլ հսկողություն է, իսկ հրամանատար Պողոս Պետրոսյանն առաջնորդվում է «սիմպատյաներով»:

«Այս հրամանատարին որեւէ զինծառայող չի ընդունում: Այս վերաբերմունքին նա արժանացել է, բայց քանի որ «կրիշ» ունի, շարունակում է իր ծառայությունը: Մի քանի ամիս առաջ էլ նույն հրամանատարը խնդիրներ է ունեցել պարեկային ծառայողի հետ, վիճել վերջինիս հետ, սակայն ՊՆ-ի կողմից կրկին մնացել է անպատիժ»-,ասում է քաղաքացին:

Քաղաքացին հայտնում է, որ հստակ չեն կարողացել իմանալ՝ ինչ պատճառով է վնասվածք ստացել, բայց ներքին խոսակցություններն այն մասին են, որ բետոնային պայթյուն «տրածիլ» է տեղի ունեցել, ինչի հետեւանքով կորցրել է մեկ ոտքը, մյուս ոտքին ստացել այրվածքներ եւ ոսկրային կոտրվածքներ:

«Ամիսներ առաջ էլ այս նույն հրամանատարի ներքո ծառայողներից մեկի աչքը զորամասից դուրս հանեցին, հիմա էլ այս դեպքը: Ինչքա՞ն կարելի է: Նախկինում նման դեպքերի ժամանակ խիստ պատժվում էին՝ նկատողություն, պաշտոնից զրկում, աստիճանից զրկում: Հիմա ինչո՞ւ է ՊՆ-ն լռում»,- հարց է բարձրացնում քաղաքացին:

ArmLur.am-ին նաեւ հայտնեցին, որ ուսումնական վարժանքների ժամանակ վիրավորում ստացած զինծառայողն ընդամենն ամիսներ անց պիտի զորացրվեր: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից հաստատեցին ArmLur.am-ին փոխանցած տեղեկությունը՝ նշելով հետեւյալը. «Զինծառայողը վիրահատվել է, գտնվում է բժիշկների հսկողության ներքո, նրա կյանքին վտանգ չի սպառնում: Առողջության եւ զինծառայողի այլ անձնական տվյալներ չենք կարող հաղորդել, քանի որ համապատասխան օրենքները (անձնական տվյալների եւ բժշկական գաղտնիքի մասին) թույլ չեն տալիս»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՇՄԱՅՍԻ ՈՐԴՈՒՆ

Մեզ հայտնի դարձավ, որ ԱԺ նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանի որդուն՝ Դավիթ Մովսիսյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր վարած «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայով բախվել է Կարեն Սաշիկի Հայդարցյանի վարած «Օպել» մակնիշի ավտոմեքենային, որի հետեւանքով անչափահաս ուղեւոր Մարկ Բաբկենի Առաքելյանը ստացել է մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն:

Այս գործը մակագրվել է Երեւան քաղաքի քրեական դատարանի դատավոր Դավիթ Արղամանյանին, եւ Դավիթ Մովսիսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նկատենք, որ մինչ ԱԺ նախկին պատգամավորի որդին վթարի գործով մեղադրյալի աթոռին է, վերջինս իր հերթին դատի է տվել ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությանը եւ պահանջում է, որ վարչական դատարանը անվավեր ճանաչի ՆԳՆ-ի 2026 թվականի փետրվարի 23-ի որոշումը: Դատելով իրավիճակից՝ միգուցե վթարից հետո Դավիթ Մովսիսյանին զրկել են վարորդական իրավունքից, եւ նա ոստիկանության այդ որոշումը վիճարկում է դատարանում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Հունիսի 19-ից 22-ը բացահայտվել է բնակարանային գողության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու 1-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԲՈՒՀՆ ԱՎԱՐՏԵԼ Է, ՍԱԿԱՅՆ ԴԵՌ ՈՒՍԱՆՈՂ Է

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի համայնքի ղեկավարի էջում տեղադրված է Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի կենսագրությունը: Այնտեղ նրա կրթության մասին նշված է. «2001-2006թթ. սովորել է Դիլիջանի պետական քոլեջում, ավարտելով այն՝ ստացել է տնտեսագետի եւ հաշվապահական հաշվառման մասնագետի որակավորում, սովորում է Եվրոպական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում՝ հեռակա»: 1984թ. ծնված Դավիթ Սարգսյանն անցած տարի՝ 2024-2025 ուսումնական տարում ավարտել է Եվրոպական համալսարանը, դիպլոմ ստացել: Նա իրեն դեռ ուսանո՞ղ է համարում, որ կենսագրության մեջ ուղղում չի մտցնում:

ՀԱՅՏՆԻ ՉԷ, ԹԵ ԵՐԲ ԿՎԵՐՍԿՍՎԻ

Դիլիջան քաղաքի մշակույթի պալատի նորոգումը սկսվել է գրեթե 4 տարի առաջ՝ 2022թ. աշնանը: 1972 թվականին կառուցված այդ շենքը կես դար ակտիվ է պահել Դիլիջանի մշակութային կյանքը, դարձել քաղաքի վարչական կենտրոնի դիմագծի անբաժանելի մասը: Մշակույթի պալատը նորոգվել է 1986 թվականին, հետո վնասվել է 1988 թվականի երկրաշարժից: Մշակույթի պալատի նորոգումն Դիլիջանում իրականացվող սուբվենցիոն ծրագրերից մեկն է, 283 միլիոն դրամից ավելի արժեքով, որի 60 տոկոսը կազմում է Դիլիջան համայնքի ներդրումը: Սակայն մշակութային այդ օբյեկտի վերանորոգումն իրականացնող «Արտդիանշին» ՍՊԸ-ն ձախողել է գործը: Մշակույթի պալատում վաղուց վերանորոգման աշխատանքներ չեն կատարվում: Հունիսի 15-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ կատարել. «Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկվում են, ինչպես մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, այնպես էլ ՏԿԵՆ-ի համապատասխան մասնագետների կողմից: Նախկինում հայտնել եք, որ ձեռնարկվել են միջոցներ Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգումն 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար: Ե՞րբ է վերսկսվելու, ավարտվելու Դիլիջանի մշակույթի տան նորոգումը, ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնելու: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տեղեկացնում եմ Ձեզ, որ Դիլիջանի մշակույթի տան պայմանագիրը միակողմանի կասեցվել է: Շինարարական կազմակերպության նկատմամբ ձեռնարկվել է համապատասխան միջոցներ: Հայտարարվել է նոր նախագծի մրցույթ, որն անցել է համալիր փորձաքննություն: Ծրագրի շարունակությունը նախատեսվում է իրականացնել համայնքապետարանի միջոցներով: Այլ մանրամասների համար կարող եք դիմել Դիլիջանի համայնքապետարան»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ո՞Վ Է ՂԱԶԻՆՅԱՆԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱՐԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ

Օրեր առաջ հայտնի էր դարձել, որ որոշում է կայացվել երկու ամսով կալանավորել «Ուժեղ Հայաստան» դաշինքի ղեկավարի թեկնածու Դավիթ Ղազինյանին: Որոշումը կայացրել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Սարգիս Դադոյանը:

ArmLur.am-ը փորձել է պարզել, թե ով է Դավիթ Ղազինյանի կալանավորման որոշումը կայացրած դատավոր Դադոյանը եւ ինչ գույք ու եկամուտներ է նա հայտարարագրել վերջին տարիներին:

Սարգիս Դադոյանը ծնվել է 1990 թվականի փետրվարի 9-ին Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում: 2011 թվականին ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2015 թվականին՝ նույն համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 2013 թվականին՝ որպես քննիչ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Կոտայքի մարզի քննչական բաժնի Նաիրիի քննչական բաժանմունքում: Այնուհետեւ աշխատել է Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում՝ որպես քննիչ եւ ավագ քննիչ, իսկ 2019-2022 թվականներին՝ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում որպես ավագ քննիչ: 2022 թվականի օգոստոսի 8-ին Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր:

Հայտարարագրի համաձայն՝ դատավոր Սարգիս Դադոյանը Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում ունի չորս անշարժ գույքի նկատմամբ բաժնային սեփականություն: Մասնավորապես, նա 1/7 բաժնեմասով սեփականատեր է երեք հողամասերի եւ մեկ անհատական բնակելի տան, որը կառուցված է հողամասի վրա եւ ներառում է նաեւ տնտեսական շինություններ: Բոլոր գույքերը ձեռք են բերվել 2020 թվականի մայիսի 17-ին՝ նվիրատվության եղանակով:

2021 թվականին, երբ Դադոյանը դեռ ԱԱԾ քննչական դեպարտամենտի ավագ քննիչ էր, հայտարարագրել էր 554 հազար դրամ կանխիկ միջոց, ավելի քան 7,1 մլն դրամ աշխատավարձ եւ շուրջ 2,4 մլն դրամ վարկային պարտավորություններ: Սեփական ավտոմեքենա չէր ունեցել, սակայն փաստացի օգտագործել էր 2014 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա:

2022 թվականին, արդեն դատավոր նշանակվելու տարում, նրա կանխիկ միջոցները կազմել են 700 հազար դրամ, տարեկան եկամուտը՝ 7 մլն 70 հազար դրամ, իսկ վարկային պարտավորությունների մնացորդը՝ 525 հազար դրամ: Այդ տարի եւս նոր գույք կամ ֆինանսական ակտիվներ չեն հայտարարագրվել:

2023 թվականին դատավորի եկամուտները կտրուկ աճել են՝ կազմելով 16 մլն 220 հազար դրամ: Կանխիկ միջոցները հասել են 1,4 մլն դրամի, սակայն միաժամանակ նա հայտարարագրել է ավելի քան 23,2 մլն դրամ հիփոթեքային պարտավորություն: Նույն տարում եւս շարունակել է օգտագործել Toyota մակնիշի ավտոմեքենան:

2024 թվականին Դադոյանի տարեկան եկամուտը կազմել է 15 մլն 345 հազար դրամ: Տարվա ավարտին բանկային հաշիվներում ունեցել է ավելի քան 404 հազար դրամ, կանխիկ միջոցները կազմել են 950 հազար դրամ: Միեւնույն ժամանակ նրա վարկային եւ փոխառության պարտավորությունները հասել են 23,5 մլն դրամի: Հետաքրքրական է, որ հենց այս շրջանում նա փաստացի օգտագործել է նաեւ Երեւանում գտնվող բնակարան, որը չի հանդիսացել իր սեփականությունը:

Ամենաթարմ՝ 2025 թվականի հայտարարագիրը ցույց է տալիս, որ դատավորի ֆինանսական ակտիվներն ու շրջանառվող միջոցները զգալիորեն ավելացել են: Նա «Ն եւ Ս Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին տրամադրել է տասնյակ միլիոնավոր դրամների փոխառություններ: Տարվա ավարտի դրությամբ այդ ընկերությանը տրված փոխառության մնացորդը կազմել է 22 մլն 442 հազար դրամ: Միեւնույն ժամանակ Դադոյանի ընդհանուր եկամուտը 2025 թվականին հասել է 21 մլն 694 հազար դրամի, որից 14,4 մլն դրամը կազմել է աշխատավարձը, 3 մլն դրամը՝ նվիրատվությունը, ավելի քան 3 մլն դրամը՝ եկամտային հարկի վերադարձը:

Դատավորի բանկային հաշիվներում տարեվերջին առկա է եղել շուրջ 375 հազար դրամ, կանխիկ միջոցները կազմել են 150 հազար դրամ: Սակայն հայտարարագրված պարտավորությունները շարունակում են մնալ խոշոր՝ ընդհանուր առմամբ գերազանցելով 27,5 մլն դրամը:

Այսպիսով, Դավիթ Ղազինյանի կալանավորման որոշումը կայացրած հակակոռուպցիոն դատավոր Սարգիս Դադոյանը վերջին տարիներին պահպանել է Գավառում գտնվող իր բաժնային անշարժ գույքը, սակայն եկամուտների եւ ֆինանսական գործարքների ծավալը զգալիորեն աճել է: Եթե 2021 թվականին նրա տարեկան եկամուտը շուրջ 7 մլն դրամ էր, ապա 2025 թվականին այն արդեն գերազանցել է 21,6 մլն դրամը, իսկ փոխառությունների եւ պարտավորությունների ընդհանուր ծավալը հաշվվում է տասնյակ միլիոնավոր դրամներով:

Հիշեցնենք, որ Ղազինյանին մեղադրանք է առաջադրվել ընտրակաշառք տալու նախապատրաստման համար, իսկ ԿԸՀ-ն համաձայնություն էր տվել նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն եւ ազատությունից զրկելուն:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

4 ՏԱՐՈՒՄ՝ 4 ՎԱՐՉԱՊԵՏ

Լոնդոնում Քիր Սթարմերը հայտարարել է, որ հեռանում է Մեծ Բրիտանիայի վարչապետի եւ Լեյբորիստական կուսակցության ղեկավարի պաշտոններից՝ նշելով, որ կուսակցությունում ձեւավորված դիրքորոշման համաձայն՝ ինքը այլեւս չի համարվում լավագույն ընտրությունը հաջորդ համապետական ընտրություններին առաջնորդելու համար:

Իր ելույթում Սթարմերը ընդգծել է, որ վարչապետ դառնալը եղել է իր կյանքի «ամենահպարտ պահը», սակայն ներկայում անհրաժեշտ է ապահովել իշխանության «կարգավորված փոխանցում»: Նա հայտնել է, որ արդեն տեղեկացրել է թագավորին իր որոշման մասին եւ պատրաստ է աջակցել նոր առաջնորդի ընտրության գործընթացին: Վարչապետը նաեւ նշել է, որ պաշտոնական փոխանցումը տեղի կունենա մինչեւ խորհրդարանի վերսկսումը՝ սեպտեմբերին:

Հետաքրքիրն այն է, որ 2022 թվականից մինչեւ 2026 թվականը՝ մոտ 4 տարվա ընթացքում, Մեծ Բրիտանիան հասցրել է ունենալ 4 վարչապետ: 2022 թվականին հրաժարական տվեց Բորիս Ջոնսոնը, նրան կարճ ժամանակով փոխարինեց Լիզ Թրասը, որը պաշտոնավարեց շուրջ 45 օր, դառնալով ՄԹ պատմության ամենակարճ ծառայած վարչապետներից մեկը: 2022-ի վերջից մինչեւ 2024 թվականը կառավարությունը ղեկավարեց Ռիշի Սունակը, իսկ 2024-2026 թվականներին՝ Քիր Սթարմերը, ով երեկ հայտարարել է իր հրաժարականի մասին:

Այսպիսով, վերջին 4 տարիների ընթացքում Մեծ Բրիտանիան ունեցել է 4 վարչապետ: Չնայած ղեկավարների այս հաճախակի փոփոխություններին՝ երկրի պետական կառավարման համակարգը չի խափանվել, իսկ Մեծ Բրիտանիան շարունակել է պահպանել իր ազդեցությունը միջազգային քաղաքականության եւ տնտեսության մեջ: Քաղաքական վերլուծաբանների գնահատմամբ՝ այս փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ներքաղաքական զարգացումներով եւ կուսակցական պայքարով, այլ ոչ թե համակարգային ճգնաժամով, ինչը թույլ է տալիս Մեծ Բրիտանիային պահպանել կայունությունը նույնիսկ ղեկավարների արագ փոփոխության պայմաններում:

Ա. Վ.

● *Բացահայտվել է 56 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու:*

ԼՈՒՐԵՐ

ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ «TRICOLOR» YEREVAN BEAT RUN ՎԱԶՔԻՆ

Յունիբանկի եւ Unisport ակումբի ներկայացուցիչները մասնակցեցին «Tricolor» Yerevan Beat Run վազքին: Միջոցառումը համախմբել էր վազքի սիրահարներին՝ ստեղծելով սպորտի, երաժշտության եւ դրական էներգիայով լի յուրահատուկ մթնոլորտ: Մասնակիցները կարող էին ընտրել հարմարավետ տեմպ եւ հաղթահարել 5 կիլոմետր:

Յունիբանկի աշխատակիցների մասնակցությունը վազքին արտացոլում է բանկի հավատարմությունը առողջ ապրելակերպի սկզբունքներին եւ սպորտի խթանմանը ոչ միայն տարբեր նախաձեռնությունների եւ աջակցության ծրագրերի միջոցով, այլեւ անձնական օրինակով:

Սպորտը միշտ եղել է Յունիբանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առաջնահերթ ուղղություններից մեկը: Բանկը հետեւողականորեն աջակցում է հայկական սպորտի զարգացմանը եւ նպաստում մարզիկների պրոֆեսիոնալ աճին:

Բանկի հաջողված մարզական նախագծերից մեկը Unisport ակումբն է, որի գլխավոր հովանավորը Յունիբանկն է: Ընթացիկ մրցաշրջանում թիմը գրանցել է բարձր արդյունքներ՝ դառնալով ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի չեմպիոն եւ Հայաստանի գավաթակիր:

(Գ)

ՀԱՆԴԻՊԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հայաստանի եւ Թուրքիայի տրանսպորտի նախարարները հանդիպում են անցկացրել: Այս մասին X սոցիալական ցանցում գրել է Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Աբդուլքադիր Ուրալօղլուն: Նա նշել է, որ Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվել է երկու երկրների միջեւ տրանսպորտային կապի վերականգնմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ նախկինում ակտիվորեն շահագործվող երկաթուղու եւ ճանապարհների վերականգնումը: Հանդիպմանը քննարկվել է նաեւ Անիի կամրջի վերականգնման գործընթացը:

IDBANK

Գ

ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ 10 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՓԱԹԵԹ

Նոր համագործակցությունը կընդլայնի բիզնեսի ֆինանսավորման հասանելիությունը եւ կաջակցի անդրսահմանային առեւտրին:

Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը (BSTDB) եւ IDBank-ը ստորագրել են 10 միլիոն եվրոյի ֆինանսավորման փաթեթ՝ Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) եւ առեւտրի հետ կապված գործունեության աջակցման նպատակով: Փաթեթը ներառում է 9 միլիոն եվրոյի վարկ՝ ՓՄՁ-ների ֆինանսավորման համար, ինչպես նաեւ 1 միլիոն եվրոյի առեւտրի ֆինանսավորման կարճաժամկետ վերականգնվող վարկային գիծ: Գործարքը նշանավորում է BSTDB-ի եւ IDBank-ի միջեւ համագործակցության մեկնարկը եւ արտացոլում հայկական բիզնեսի համար ֆինանսավորման հասանելիության ընդլայնմանն ուղղված կողմերի հանձնառությունը:

Միավորելով ՓՄՁ-ների ֆինանսավորումն ու առեւտրի ֆինանսավորման աջակցությունը՝ գործընկերությունը նպատակ ունի նպաստել Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանն ու տնտեսական աճին: Ֆինանսավորումը հնարավորություն կտա IDBank-ին ընդլայնել հայաստանյան ՓՄՁ-ներին տրամադրվող վարկավորումը եւ աջակցել ներմուծման ու արտահանման համապատասխան գործարքներին՝ նպաստելով մասնավոր հատվածի զարգացմանն ու անդրսահմանային առեւտրին: ՓՄՁ-ները կարեւոր դեր ունեն Հայաստանի տնտեսությունում, իսկ ֆինանսավորման հասանելիության բարելավումը բիզնեսի զարգացման եւ նոր աշխատատեղերի ստեղծման առանցքային նախապայմաններից է:

«Ֆինանսավորման հասանելիությունը շարունակում է առանցքային նշանակություն ունենալ ՓՄՁ-ների աճի եւ մրցունակության համար: Մենք ուրախ ենք ընդլայնել մեր ներկայությունը Հայաստանում՝ համագործակցություն սկսելով IDBank-ի հետ եւ աջակցելով հայկական բիզնեսներին այնպիսի ֆինանսավորմամբ, որը կխթանի առեւտուրը եւ կնպաստի կայուն տնտեսական գործունեությանը»,-նշել է BSTDB-ի նախագահ, դոկտոր Սերհաթ Քյոքսալը:

«IDBank-ը շարունակում է ընդլայնել համագործակցությունը հեղինակավոր միջազգային ֆինանսական կառույցների հետ, եւ BSTDB-ի հետ գործընկերությունը համահունչ է հայկական բիզնեսին միջազգային ֆինանսական ռեսուրսների ավելի լայն հասանելիություն ապահովելու մեր ռազմավարական նպատակին: ՓՄՁ-ների ֆինանսավորման ծրագիրը կնպաստի հայկական ձեռնարկությունների աճի, շրջանառու միջոցների եւ ներդրումային կարիքների ֆինանսավորմանը, իսկ առեւտրի ֆինանսավորման գործիքը կընդլայնի IDBank-ի հնարավորությունները՝ աջակցելու կորպորատիվ հաճախորդների ներմուծման եւ արտահանման գործարքներին: Ընդհանուր առմամբ, համագործակցությունը համապատասխանում է IDBank-ի հաճախորդակենտրոն մոտեցմանը եւ իրական տնտեսության ու միջազգային առեւտրի զարգացմանն աջակցելու մեր առաքելությանը»,-նշել է IDBank-ի վարչության նախագահ Միեր Աբրահամյանը:

ՓՄՁ-ների ֆինանսավորման ծրագիրը հայկական ընկերություններին կտրամադրի միջնաժամկետ ֆինանսավորում՝ աջակցելով ներդրումներին, արդիականացման ծրագրերին եւ շրջանառու միջոցների կարիքներին տնտեսության արտադրողական ոլորտներում: Առեւտրի ֆինանսավորման գործիքը կօգնի ընկերություններին ապահովել առեւտրային հոսքերի շարունակականությունը եւ ամրապնդել իրենց հասանելիությունը տարածաշրջանային եւ միջազգային շուկաներին:

IDBank-ը Հայաստանում գործող առեւտրային բանկ է, որը ֆիզիկական անձանց, ՓՄՁ-ներին եւ կորպորատիվ հաճախորդներին տրամադրում է ֆինանսական ծառայությունների լայն շրջանակ: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում թվային բանկինգի, վճարային լուծումների եւ նորարարական ֆինանսական ծառայությունների զարգացմանը եւ գործում է ID Group էկոհամակարգի շրջանակում: Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը (BSTDB) միջազգային ֆինանսական կազմակերպություն է, որը հիմնադրվել է Ալբանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ուկրաինայի կողմից:

BSTDB գլխամասային գրասենյակը գտնվում է Սալոնիկում (Հունաստան): BSTDB-ն աջակցում է տնտեսական զարգացմանը եւ տարածաշրջանային համագործակցությանը՝ տրամադրելով վարկեր, վարկային գծեր, կապիտալ եւ երաշխիքներ իր անդամ երկրների պետական եւ մասնավոր հատվածների նախագծերի ու առեւտրի ֆինանսավորման համար: Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 3,45 միլիարդ եվրո: BSTDB-ի մասին լրացուցիչ տեղեկություններ հասանելի են www.bstdb.org կայքում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը պատրաստվում է հաջորդ շաբաթ այցելել Հայաստան: Այս մասին գրում է Politico-ն՝ հղում անելով այցի ծրագրերին ծանոթ երեք աղբյուրի: Պարբերականի տեղեկություններով՝ պատվիրակության կազմում կլինի նաեւ ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը: Այցը նախատեսվում է հուլիսի 1-ին, սակայն Politico-ն նշում է, որ ծրագրերը դեռ վերջնականացված չեն:

Պարբերականը գրում է, որ այցը դիտարկվում է որպես բարձր մակարդակի աջակցության ազդակ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ նրա ղեկավարած քաղաքական ուժի՝ հունիսին կայացած խորհրդարանական ընտրություններում տարած հաղթանակից հետո: Politico-ի գնահատմամբ՝ այցը տեղի է ունենում այն փուլում, երբ Փաշինյանի կառավարությունը ձգտում է ամրապնդել Հայաստանի արտաքին քաղաքական շրջադարձը Մոսկվայից դեպի Արեւմուտք եւ խորացնել հարաբերությունները Եվրոպական միության հետ:

Պարբերականի հետ զրուցած ԵՄ պաշտոնյաներից մեկը նշել է, որ Հայաստանը գտնվում է Ռուսաստանի «ինտենսիվ եւ հետեւողական ճնշման» ներքո, իսկ նման այցը կարող է աջակցության ուժեղ ուղերձ լինել Երեւանին: «Դա ուղերձ կլինի, որ Եվրոպա Հայաստանի կողքին է»,- ասել է Politico-ի զրուցակիցներից մեկը: Պարբերականը նշում է նաեւ, որ հնարավոր այցը հետեւանքներ է ունեցել Բրյուսելի աշխատանքային օրակարգի վրա: Ըստ Politico-ի՝ հուլիսի 1-ին նախատեսված Եվրահանձնաժողովի կոլեգիայի նիստը չեղարկվել է, ինչի հետեւանքով մի շարք օրենսդրական նախաձեռնությունների ընդունումը հետաձգվել է կամ փոփոխության ենթարկվել: Ըստ պարբերականի՝ այդ նախաձեռնությունների թվում են Եվրահանձնաժողովի հանրային գնումների մասին ակտը, ԵՄ մրցութային կանոնների վերանայման ծրագիրը, ինչպես նաեւ պաշտպանության միասնական շուկային, նորարարությանը եւ անասնապահությանը վերաբերող նախաձեռնություններ: Politico-ն հիշեցնում է, որ սա կարող է լինել Ուրսուլա ֆոն դեր Լայենի երկրորդ այցը Հայաստան երկու ամսից պակաս ժամանակահատվածում: Եվրոպական հանձնաժողովի նախագահը մայիսին Երեւանում էր Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին մասնակցելու նպատակով, որից հետո մասնակցել էր նաեւ ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՐՑՈՒՅԹ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆ՝ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Գերմանացի թավջութակահարուհի Կոսիմա Ռեգինա Ֆեդերլեն դարձել է 2026 թվականի Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակակիրը, գրում է News.am-ը: Այս հաղթանակի արդյունքում նա արժանացել է 10,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամական պարգևի, ինչպես նաև ստացել կարևոր միջազգային համագործակցային հնարավորություններ՝ հանդես գալու հեղինակավոր բեմերում եւ ներգրավվելու նոր մասնագիտական նախագծերում:

Ֆեդերլեն սեպտեմբերին ելույթ կունենա Համբուրգի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի հետ համագործակցության արդյունքում: Բացի այդ, IMK Vienna-ի հետ համագործակցության շնորհիվ երիտասարդ թավջութակահարուհին Հյուսիսային Չեխական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հանդես կգա Պրահայի Սմետանայի անվան համերգասրահում: Մրցույթի ընթացքում Ֆեդերլեն նաեւ ստացել է հատուկ մրցանակ՝ երկրորդ փուլում սոնատի լավագույն մեկնաբանության համար:

Երկրորդ մրցանակը շնորհվել է ռուս թավջութակահար Բոգդան Եֆրեմովին՝ 5,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամական պարգեւով: Նա նաեւ արժանացել է հատուկ մրցանակների՝ Դավիդ Պոպերի մենանվագ թավջութակի համար գրված Էտյուդների եւ Արամ Խաչատրյանի Սոնատ ֆանտազիայի լավագույն մեկնաբանությունների համար: Երրորդ մրցանակին արժանացել է հայ թավջութակահար Արտյոմ Իոանիսյանը: Նա նաեւ հանդիսատեսի քվեարկությամբ ստացել է ամենաբարձր ձայները՝ ստանալով հատուկ մրցանակ «Հանդիսատեսի համակրանքը» անվանակարգում, ինչի արդյունքում հնարավորություն կունենա հանդես գալու Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ:

Հատուկ մրցանակի է արժանացել նաեւ եզրափակիչ փուլ նացած ԱՄՆ ներկայացնող թավջութակահարուհի Միրիամ Կ. Սմիթը՝թավջութակի համար գրված մենանվագ ստեղծագործության լավագույն մեկնաբանության համար:

Մրցույթի ժյուրին այս տարի նախագահում էր Լեւոն Մուրադյանը (Հայաստան/-Պորտուգալիա): Ժյուրիի կազմում էին միջազգային երաժշտական աշխարհի ճանաչված ներկայացուցիչներ՝ Դենիս Սեւերինը (Շվեյցարիա), Մարտի Ռուսին (Ֆինլանդիա), Մեհա Ռիոն (Կորեայի Հանրապետություն), Ջոզեֆին Նայթը (Միացյալ Թագավորություն), Գրեգորիո Նիետոն (-Վենեսուելա) եւ Վիկտոր Ժյուլյեն-Լաֆերիերը (Ֆրանսիա):

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ՝ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կազմակերպմամբ: Մրցույթի ռազմավարական գործընկերն է Freedom Broker Armenia-ն, հովանավորը՝ Երեւանի քաղաքապետարանը, իսկ աջակիցներն են VISA-ն եւ ԱԿԲԱ բանկը: Խաչատրյանի անվան միկջազգային մրցույթը անդամակցում է Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիային (WFIMC):

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Հայաստանի ղեսվիրակությունը Փարիզում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի Գլխավոր ասամբլեայի 11-րդ նստաշրջանին եւ հանդես եկել ելույթներով:

ԿԳՄՍ նախարարության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բաժնի պետ Նաիրա Կիլիչյանը ելույթում նշել է, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ոլորտում առանձնահատուկ կարեւորում է պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը՝ այն դիտարկելով որպես արդյունավետ եւ կենսունակ մշակութային քաղաքականության հիմնարար ուղղություններից մեկը: Նա միաժամանակ ընդգծել է, որ ԿԳՄՍ նախարարությունը, իրականացնելով բաց եւ թափանցիկ մշակութային քաղաքականություն, ամեն տարի դրամաշնորհային ծրագրերի միջոցով ֆինանսական աջակցություն է տրամադրում մշակութային հասարակական կազմակերպություններին, որոնք ուղղված են համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանը եւ հանրահռչակմանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ Արամ Հակոբյանը եւս ընդգծել է, որ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի մշակութային քաղաքականության առաջնահերթություններից է: Նա կարեւորել է համայնքների կարիքների ընկալումն ու դրանց մշակութային ժառանգության պահպանությունը:

Նստաշրջանի ընթացքում հայկական «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպությունը հավատարմագրվել է որպես Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության միջկառավարական կոմիտեին խորհրդատվական կարգավիճակով աջակցող հասարակական կազմակերպություն՝ ի ճանաչում ոլորտում ունեցած մասնագիտական փորձառության:

Այն Հայաստանի երկրորդ հասարակական կազմակերպությունն է, որն արժանանում է նման բարձր միջազգային ճանաչման. 2020 թ. հավատարմագրվել էր «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն» Հ/Կ-ն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱՆ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԱԱ–2026–Ի ՓԼԵՅ–ՕՖՖ

Ֆուտբոլի Ֆրանսիայի ազգային հավաքականը ԱԱ-2026-ի խմբային փուլի երկրորդ տուրում վստահ հաղթանակ տարավ Իրաքի ընտրանու նկատմամբ եւ ժամանակից շուտ ապահովեց իր տեղը մրցաշարի փլեյ-օֆֆում, գրում է armsport-ը: ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքի «Լինքոլն Ֆայնենշել Ֆիլդ» մարզադաշտում կայացած հանդիպումն ավարտվեց եվրոպացիների հաղթանակով՝ 3:0 հաշվով: Խաղի հաշիվը 14-րդ րոպեին բացեց Կիլիան Մբապեն՝ աչքի ընկնելով Մայքլ Օլիսեի փոխանցումից հետո: Առաջին խաղակեսի ավարտին հորդառատ անձրեւի եւ ամպրոպի վտանգի պատճառով հանդիպման գլխավոր մրցավար, կանադացի Դրյու Ֆիշերը ստիպված եղավ դադարեցնել խաղը: -Հարկադրված դադարը տեւեց մոտ երկու ժամ: Վերսկսված խաղի երկրորդ կեսում ֆրանսիացիները շարունակեցին իրենց գերիշխանությունը: Ուսման Դեմբելեի փոխանցումից հետո Մբապեն դարձավ դուբլի հեղինակ, իսկ 66-րդ րոպեին Դեմբելեն անձամբ գրավեց մրցակցի դարպասը՝ դնելով հանդիպման վերջակետը:

Այս հանդիպումը նշանավորվեց Ֆրանսիայի հավաքականի աստղերի համար մի շարք անհատական նվաճումներով. Մբապեն հետապնդում է Մեսսիին. 27-ամյա Կիլիան Մբապեն ԱԱ-2026-ի երկու խաղում արդեն դարձել է 4 գոլի հեղինակ: Աշխարհի առաջնություններում խփած իր գոլերի ընդհանուր քանակը նա հասցրեց 16-ի՝ շրջանցելով բրազիլացի Ռոնալդոյին (15) եւ հավասարվելով գերմանացի Միրոսլավ Կլոզեին: Այժմ նա բոլոր ժամանակների ռմբարկուների ցուցակում կիսում է 2-րդ տեղը՝ զիջելով միայն արգենտինացի Լիոնել Մեսսիին, ով ունի 18 գոլ (Մեսսին նույնպես մասնակցում է այս մրցաշարին եւ արդեն աչքի է ընկել 5 անգամ):

Հոբելյանական խաղ եւ ռեկորդ. Մբապեն անցկացրեց իր 100-րդ հանդիպումը ազգային հավաքականի կազմում: Իր 59-րդ եւ 60-րդ գոլերով նա ամրապնդեց Ֆրանսիայի հավաքականի պատմության լավագույն ռմբարկուի իր կարգավիճակը:

Դեմբելեի նորամուտային գոլը. «Ոսկե գնդակի» գործող դափնեկիր Ուսման Դեմբելեի համար սա կարիերայում առաջին գոլն էր Աշխարհի առաջնություններում:

Այս հաղթանակի շնորհիվ Դիդիե Դեշամի գլխավորած թիմը վաստակեց 6 միավոր եւ ապահովեց խմբից դուրս գալու հարցը: Իրաքը առանց միավորների եզրափակում է մրցաշարային աղյուսակը:

Խմբային փուլի վերջին տուրում Ֆրանսիան կմրցի Նորվեգիայի հետ, որն առաջին տուրում 4:1 հաշվով հաղթել էր Իրաքին, իսկ իրաքցիները կփորձեն առաջին միավորները վաստակել Սենեգալի դեմ խաղում:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հուլիսի 5-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Երեք խոզուկ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչ՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Արմինե Հովհաննիսյան, 62 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը: ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝ 24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
Միասնական սոցիալական ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են դրամի վճարունակության հատկանիշները, եւ ինչպե՞ս իմանալ, որ իմ դրամը համարվում է վճարունակ:

Վազգեն Սարգսյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ թղթադրամները եւ մետաղադրամները համարվում են վճարունակ, եթե համապատասխանում են Կենտրոնական բանկի սահմանած նկարագրությանը եւ վճարունակության հատկանիշներին: Թղթադրամները համարվում են վճարունակ եւ փոխանակվում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից, որոնք.

աննշան չափով ծակոտված են, պատռված, մաշված կամ կրում են աննշան բծեր եւ գրառումներ, որոնց վրա կա աննշան քանակությամբ ներկ, բայց թղթադրամի հիմնական պատկերները եւ պաշտպանիչ հատկանիշները չեն ծածկված, կամ աննշան չափով այրված են, բայց թղթադրամի ամբողջականությունը պահպանվել է:

Թղթադրամները համարվում են վճարունակ, բայց կարող են փոխանակվել միայն բանկերում, որոնք.

չեն պահպանել իրենց ամբողջականությունը, բայց թղթադրամի մակերեսի առնվազն 60%-ը հստակ պահպանվել է, եւ պահպանված մասը թույլ է տալիս հաստատել թղթադրամի վավերականությունը, կազմված են անվիճելիորեն նույն թղթադրամի ոչ ավելի քան 3 պատռված կտորներից, ծածկված են ներկով կամ կորցրել են իրենց գույնը, բայց պատկերները եւ պաշտպանիչ հատկանիշները տեսանելի են եւ թույլ են տալիս հաստատել թղթադրամի վավերականությունը:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում՝ Բաբաջանյան փողոցում, բախվել են «Mazda»-ն եւ «Kia Forte»-ն: Վերջինը բախվել է երկաթե էլեկտրասյանը եւ հայտնվել կանաչ խոտածածկույթի վրա. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 13 + 17 + 21
Կոտայքի լեռներ	+ 7 + 12 + 16 + 20
Կոտայքի նախալեռներ	+ 15 + 18 + 22 + 25
Գեղարքունիք	+ 8 + 13 + 14 + 18
Լոռի	+ 9 + 14 + 15 + 19
Տավուշ	+ 10 + 14 + 16 + 20
Արագածոտնի լեռներ	+ 6 + 11 + 16 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 19 + 22 + 27

Արարատ	+ 15 + 19 + 24 + 28
Արմավիր	+ 15 + 19 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 12 + 16 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 20 + 26 + 30
Սյունիքի լեռներ	+ 8 + 12 + 13 + 17
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17 + 18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 + 26 + 29
Երեւան	+ 18 + 20 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*